ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ին. Թիֆլիս. №50

ეროვნული ბიბლიოთეკა

ԷՋՄԻԱԾՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ 11 ԴԵԿՏ. 1912 Թ.



Սիրտս ուրիշ բան է թելադրում, գլխարկս այլ բան է ասում, որին լսեմ...

Лит. С. Быхова

Բացված է բաժանորդագրություն

1912 թ.

VII տարի **ԽԱԹԱԲԱԼԱ** VII տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

[Ամենաանհրաժեշտ թերթը հայ ընտանիքների համար]

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» միակ հայ թերթն է, որ գոյնզգոյն նկարում է մեր գործիչներին։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» հրատարակում է ռուսական եւ եւրոպական իմորիստիկ լաւագոյն թերթերի օրինակով եւ ո՞վ զարմանք՝ հայկական կեանքում։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շարունակում է այս տարի էլ իր աշխատակիցների հետ ազգակցական կապեր պահպանել եւ նրանց մասնակցութեամբ ծաղր ու ծանակի դարձնել նրանց՝ որոնք ծաղր ու ծանակի արժանի են։

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ։

ԽՆԱՄԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՆՈՅՆՊԷՍ

ԿԱՇԱՌԲ ԵՒՍ ԱՌԱՒԵԼ։

1912 թւին էլ մեր մշտական աշխատակիցներն են լինելու՝

ԳՐԻՉՆ ՈՒ ԹԱՆԱՔԸ, ՆԵՐԿՆ ՈՒ ՀԱՆԱՔԸ

Առաջիկայ 1912 թւին մենք մեր բոլոր բաժանորդներին խոստանում ենք՝

1. Ամեն շաբաթ դարդոտ ժամանակ կուշտ ծիծաղեցնել։
2. Վշտերը փարատել—
3. Մարտողութիւնը կանոնաւորել (կուշտ ծիծաղելով)։
4. Մեր գործիչների իսկական պատկերների հետ ծանօթացնել։
5. Ամեն ցաւ ու դարդից, շար ու վշտից հեռու պահել։
6. Փողը ստանալիս՝ անդորրագիր տալ։
7. Հանդերձեալ աշխարհում Մէֆիստոֆելի միջոցաւ ցանկացողներին ոմանց դժողք, ոմանց արքայութիւն առաջնորդել։
8. Իսկ անպարտաճանաչ եւ պարտքերը չվճարող բաժանորդներին եւ գործակալներին ՀԱՐԱՄՏՕՐԷՆ ՍՆԱՆԿԱՑԱԾ յայտարարել։

Այս բոլոր առաւելութիւնների համար «ԽԱԹԱԲԱԼԱՆ» գնահատում ենք՝

Տարեկան 5 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի

Երեք ամիսը 1 ր. 50 կ. եւ ամիսը 50 կոպ.:

Մեր ուղղամիտ բաժանորդներին առաջարկում ենք բաժանորդագրուել նաև «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» ամենօրեայ գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական թերթին, որի գինն է տարեկան 10 ր. կէս տարին 6 ռուբլի

Իսկ „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ և „ԽԱԹԱԲԱԼԱ“ միասին

Տարեկան . . . . 12 ր.

Կէս տարին . . . . 7 ր.

«Սուրհանդակը» անհրաժեշտ է նամանաւանդ առևտրականներին

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Մեր հասցէն՝ Тифлисъ „Хатабала“.

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 **ԴԵԿՏԵՄԲԵՐ** 31 օր

10

Суббота **ՇԱԲԱԹ** შაბათი

Լուսնի 23

11 (կիր.) Նախատօնակն ազգային խայտառակութեան և ափաշկարայ խաչագողութեան, որ ի սուրբ Էջմիածին:

12 (բ. շ.) Ցիշատակ Քոռից ցանկից և անպէտքից, որք այսպէս մանեկին լինին, բայց կաթողիկոս, ոչ ծնին:

13 (գ. շ.) Տօն սրբոցն պատգամաւորաց, որք ի Տաճկաստանէ եկեալ կան և որ զանազան յանկիւնս եղեալ կան... և որ այսօր շնորհիւ սրբոյն գագանակի ու մասամբ նոցին, (ոմանք ասին և ձեռակերտին) լուսազարդեն Արամազնեայ Աթոռն Լուսաւորչի:

14 (գ. շ.) Ցիշատակ փոշմանութեան խղճի խայթի վասն ընտրելոյ:

15 (հ. շ.) Անւանակոչութիւն և քէֆարանութիւն ի մէջ սուրբ քաղաքին Երևան:

16 (ուրբ.) Տարեդարձ յիմարութեանց հայոց, որք մեծ-մեծ մատծին և պստիկ-պստիկ գտեն:

Աստղ. ատմար. և օրացուցագէտ

Ագրիսիոս Էճէլեցի

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

I

Մեծապատիւ պարոն խմբագիր!

Շտապում եմ ուղարկել Ձեզ հարիւր րուբլի և խնդրում եմ ուղարկել ինձ Ձեր և մեր պատւական «Խաթաբալա» շաբաթաթերթից 20 օրինակ և ամեն շաբաթ՝ սրանցից մեկը յատկապէս ինձ համար, մէկը կնոջս համար, մէկը մեծ որդուս համար, մէկը միւս որդուս համար, մէկը երրորդ որդուս համար, մէկը ամուսնացած աղջկաս համար, միւսը օրիորդ դստերս համար, մէկն էլ նորածննունդ դըստրիկիս համար, մինն էլ ապագայ ծնւելիք որդուս համար. կրկին խնդրում եմ ուղարկել մէկ օրինակ մեր դռնապանի համար, մէկ օրինակ էլ խոհարարի համար, մէկ օրինակ ծծմայրի համար, մէկ օրինակ էլ մեր հարևանի համար, մէկ օրինակ էլ խնդրում եմ միւս հարևանի համար, մէկ օրինակ մեր գլխաւոր հաշւապահի համար, մէկ օրինակ էլ սրա օգնականի համար, մէկ օրինակ էլ գրասենեակապետի համար, մէկ օրինակ էլ կառավարչի համար, մէկ օրինակ էլ սրա կնոջ համար, մէկ օրինակ էլ մեր թղթատարի համար:

Խորին յարգանքներով

Աբէլ Չիրախչեան

Թիֆլիս:

II

Սիրելի խաթաբալա.

Ուղարկում եմ սրա հետ հինգ հարիւր մանէթ և բաժանորդ եմ գրւում պատւական «Խաթաբալայիդ» հարիւր տարով: Խնդրում եմ թէ այստեղ և թէ հանդերձեալ կեանքում ինձ առանց «Խաթաբալայի» չը թողնէք:

Միշտ անձնանւէր՝

Հայկ Ասիմալեան

Ш

Մել սիլելի «Խաթաբալա»!

Մենք կոպէկ կոպէկ հաւաքեցինք այս փողը եւ ուղալկում ենք Ձեզ ոլպէսզի, դուք էլ մեզ ուղալկէք սիլուն «Խաթաբալան»:

Մի խումբ երեխաներ

IV

Աստուծ վուր աշխարքը ստիղծեց ու Աթամ ու Էւին դրախտէմէն դուս գցից, ասաց թէ, գուզիք, կօսէ էսուր էտև ուրախանաք՝ «Խաթաբալա» կարթացէք, կօսէ: Զունքի մինք դրախտէմէն դուս գցածինք ու դրախտի տիղ վուչինչ չունինք էս սհաթիս, մաշ լօթիանայ, խնթրում ենք Ձեզ, «Խաթաբալէն» մեզմէ անպակաս անէք, դրա համար էլ ուղարկում ենք քսան ու հինգ թուման յիսուն տարւայ բաժանորդագին:

Ճանճուր Փափակուլեան.

V

Իդա Խաթապէլան մեզնից անպակաս արա, Աստուծն էլ գքեզ դրամէն անպակաս ընէ. մենք ղարիբ հայերս կու խնթրինք մեր մէկ Խաթապէլան շաբթէ շաբաթ սիրուն նկարներով:

Տաճկահայեր.

Ստորագրութիւնները վաւերացրած է Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի կողմից— թէև «օրէնսգէտ» Եփրեմ եպիսկոպոսը ասել էր՝ թէ տաճկահայերն էլ հայերէն չեն գիտցել*):

ԱՌԱՋՆՈՐԴԻ

Էլի էչմիածին...

Դիտխ էչմիածին, մա՜շ, էչմիածին:

Հայը ինչդդամ ցոցիալ է դառնում էնքան էլ էչմիածնից չի պոկ գալի:

Էտու համա էլ միր լուսահոքի կաթողիկոսները մէկը միւսից շուտ մեռան, չունքի ուզեցան տեհնիլ միր ակլի պէյծառ ցոցիալութինի չափը:

Համա էդ դէնը դնինք:

Ու էդու վրէն էլ չխօսինք.

Իս գուզիմ ձիգ հիդ խօսի էսօր միր պրեմիի՝ կաթղիկոսացուի վրէն:

Մոներդ գալիս է իրիք տարի աղաք

իս ձիգ վուր ասի, ն[illegible] Ալեքսանդրէ Մանթաշովին [illegible] ինձ չլսեցիք. աբա հիմի ո՞վ ուփրօ փոշման է, ո՞վ ուփրօ զարարի մէչ է, մայնց, վուր դուք:

Ախպէր, Մանթաշովին, վուր ընդրէինք, չէր կուլէր վուր՝ իփ վուր նա մեռնէր, վունց վուր մեռաւ, մինչկի օխտանասուն միլիօն մանէթի նասլէդնիկնիրը էլի մինք կուլէինք, օխտանասուն միլիօնը փուղ է է՜, հուղ խօտ չէ՜:

Մէ բան վուր լուսահոքի Իզմիրլովն էլ թէզ մեռաւ, մէ բան վուր՝ մեռնելուց յիդ չուրսքանթումնից աւիլ բան չթողից. հագիր Ալեքսանդրէ Մանթաշովը ըլէ՜ր, մահը մահ էր, միլիօնները էլ չոգ. ա՜յ իս էնդուր իմ ասում, վուր հայերս պոլէտիկուրի ու հէսաբի խիլք չունինք:

Էլի էչմիածին՝

Դիտխ էչմիածին:

Գնում ին էչմիածին ծերոնէրի (կըռունկների) հանգի էս ու էն աշխըրքից պատգամաւորները. ինչի չին գնայ, մէ տիղ վուր, պրօգօն էլ ին տալի. աբա հայը չի՞ գնա՜յ:

Վրթանէս Փափազովին փուղ վուր տաք, թաք տաք, ու ասիք, գնա՜ ջհանդամը, էնդի, կպրի կարասում օխտը ջէր լողցի ու տկլոր յիդ արի, նա՝ էդ Փափազովը կեհայ. էդ թաւուր խասիաթ ունէ մարթը ու իր համա պապէքի հոքին տասնուչուրս շահով կու ծախէ ու բաս չի գնա՜յ. նա էլ չի՛՝ միր Եփրիմ էպիսկուպո՞ զը...սա էլ վուր գնա՜ց:

Վա՜յ աշխըրքի քոռութին, միր քաղքիցը ո՞վ գնա՜ց:

Գնան ախպէր, գնան, իրենց հալալ, ձեռը ձեռքով է լւացւում ասած է աթագան:

Աբա կուլի՜ի, վուր շաւ. րը չգնա՜ն. էլ վուրղանց պտի հաց ուտին, ան կեըածը քթներիցը չպիտի դուս գա՜յ:

Պիտի դուս գա՜յ:

Դուս գուքա՜—

Ջէր շատ բանիր դուս գուքայ փիս մարթի քիթ ու պռունգիցը:

Էտ կի չէ ու էն Մհրդատ Հայկազը էլի էկիլ է ա՜յ. համա լաւ քիտըչի կուլի՜ է, ասինք հարիսա էլ լաւ կու շինի, ղոչաղ է, համա քիաչութինը իրէն վրէն ձևած է, Աստուծ կինք տայ. մինձ մարթ է, ակի լուսաւորիչ է իգիթ Ռուբէն Խանազատի թաւուր. վուր ասինք սա էլ պակաս գօգրա չէ՛, լեզու

---

*) Ծանօթ. խմբ.—Սրանք բոլորը ընդունւած են մեր բաժանորդների շարքը:

ԱԼԱԳԵԱԶ

ეროვნული ბიბლიოთეკა

ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

է, վուր էդ լեզուն չունենայ, ակռաւնեբը... գուքան կու տանին։

Դա էլ վունչինչ—դուք նոր բան լսէք։

Նոր բանն էլ էն է վուր, Մեսրուպ Եպիսկուպոզը ասիլ է, իմ կաթողիկոսացուն, կոսէ. Կարապիան Եպիզկուպոզն է, կոսէ, Կարապիան էլ էս վուր լսիլ է, Ինչախնեէթ շտապիլ է ու էկիլ է Թաւրիզէմէն—ու Մեսրոպին դէմ ու դէմը ասիլ է՝ սրբազան եղբայր իմ, կոսէ, կաթողիկոսացուն դուն իս, կոսէ, ու ինձ ինչի իս առաչարկում, կոսէ։

Իժում էրկուսն էլ լաց ին էլի։

Մա՛շ։

Հոքին սուփ դառնայ Գոռնակերովի, այ իստակ կաթողիկական խարջ-ասինք լուսահոքի Մեսրուպ Սմբատովն էլ պակաս չէր, համա էլի—խոսքը վուր միր մէջ մնայ ու վարթապիտներէմէն նընդրելու լինիք կաթողիկոս՝ Համազասպ հայը սուփը դիփուننանցից լաւ է. սա համ ռուսաստանցի է, համ էլ «Հորիզոնի» ուղածի թաւուր է, խիղճ մարթ է, մինձ խիլքի տէր չէ։

Ասինք, ով գիդա շատերը չղաբլուին էլ էստուր վրան, չունքի ասում ին խիլունք մարթը, կոսէ, լաւ չէ, կոսէ, կաթողիկոսութինի համա, կոսէ։

Աստուձ գիդենայ դուրթ իմ ասում։

Էնօրը խիլիմ խալխ էին էկի Ստամբուլիցը, դիփ ջուխա-ջուխա էին ման գալի, վունց վուր շամայիք մէկմէկու վրէն կապած ին, էնինց էլ սրանք կոսիս կապլած էին.—իս էլ ռաստ էկայ. խիլիմ խոսեցինք պոլէտիկուրի բաներու վրէն, Սուլթանի քթի, նաղիր վէզիրի միրքի, ինգլիզներու թաքաւուրի, բերձիններու, օսերու, մըլթոններու վրէն, վիրչն էլ խոսք ընկաւ կաթողիկոսական աշխրքի վրէն ու նրանցմէն իմացայ, վուր չունքի, կոսէ, Օրմանովը, կոսէ, խիստ խիլունք մարթ է, կոսէ, ան կաթողիկոս ըլլալու չէ, կոսէ։

—Անխիլքը լաւ է, ասի։

—Անխիլք կաթողիկոս աղէկ կըլլայ, կոսէ, մենք սկզբանէ խիլքին գին չինք տար, կոսէ, դատարկութիւն՝ ան լաւ ապրանք է, կոսէ։

—Նազդ էք ասում, ասի։

—Հէլբէդ, Խաթապէլա աղբայր ջան, կոսէ։

Իս էս վուր տեսնում իմ ու միր օսմանցիրների խասիաթը իմանում իմ, մինք պտէինք չալիշ գայ՝ էնթաւուր կաթողկոս ջոգինք, վուր մէ քիչ դատարկ ըլի, դատարկութիւնը լաւ է «ան՝ սիրտ կունենայ» ասում ին օսմանցիք։

Արի մէ բան ասիմ, ան մէ բոչկա ան մէ մինձ դատարկ գոգրա նընդրիք—էդ Թաւուրը համ «Հորիզոնին» ձեռք կու տայ, համ էլ Թրքահայերուն չի բաժնի մեզնից—նրանք էլի կըգան. էլի միզ հիդ կուլին, միզ համա աղօխք կօնին, միզ կու պահին։

Դատարկութինը ամենայաւ բան է էս սնաթիս։

Ասինք գլխի դատարկութինը միշտ լաւ է էլի, խիլքը չի դոռ տայ, սիրտը ինչ գուզի թող անէ։

Աստուձ սաղ սալամաթ պահէ հաուց ասկի կենթանի մեռածներուն հոքին, մեզ մօտ գլխի դատարկութինը ուփրոգին ունէ։

Խաթարալա ամեն հայուց

Դատարար աղա Կոլաեուզով

Կաթողիկոսական ընտրական խնդիր

—o—

ԹՕՍՄԱՆՅԱՆՈՒԹԻՒՆ ԼՈՒՐԵՐԸՀՈՒՑ ՊԸՏՏՈՒՄՆԵՐՈՒՆԵՐԻ ՀԵՏ

—

—Էֆէնդի ձեզանում ինչ արժանաւոր եկեղեցականներ կան։

—Մեզանում արժանաւոր եկեղեցականը միայն սրբազան Օրմանեանն է. ան Բիսմարկին չափ հանճարեղ է, ան իսկական պողպատ է՝ ուսեալ և կարող ոյժ։

—Մի՞թէ։

—Հելպէսթ. անոր նման մեծ մարդ մենք երբ ունինք և կամ կրնենք ունենալ։

—Ուրեմն լաւ կաթողիկոսացու է էլի։

—Է ինչ կըսէք, նմանը չունէ։

—Ուրեմն դուք ուզում էք նրան տալ ձեր ձայնը։

—Ո՛չ, էֆէնդըմ, ադ չիմ կրնալ ընել, ինձի պատւէր տւած ին, ես էլ տուն տեղ գործ ունիմ, ինչպէս կրնամ այդպիսի բան ընել։ Ես չիմ կրնայ իմս քւէն անոր տալ։ Երկիր երբ դառնամ, տունս կաւրւէ...

—

Մի ուրիշ պատգամաւորի հետ զրոյց, որը մասամբ կուսակցական է

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Ուրեմն ձեր ասելով Օրմանեանը ա դպիսի խելօք և կարող ոյժ է։

—Հարկաւ էֆենդըմ. ան մի հատիկ է, և բացի այս շատ մը առաւելութիւններ էլ ունէ։

—Անշուշտ դուք ձեր քւէն Էջմիածնի ժողովին տալու էք նրան։

—Ո՛, ոչ քաւ լիցի. չեմ կրնար առանկ բան մը ընել...

—Ի՞նչի։

—Վասն զի ան՝ Օրմանեանը յոյժ խելօք անձ՞մէ։

—Աւելի լաւ։

—Մենք սկզբունքով որոշել ենք—խելօք և կարող անձերը հեռու պահել գործերէ, որպէսզի մեր գործունէութեանը չվնասէ...

—Աֆերըմ էֆենդի...

—

Տեսակցութիւն տաճկահայ մի հոգեւորականի հետ

—Ես կարծում եմ թէ, Օրմանեանի մասին չպիտի խօսել։

—Հարկաւ, չպիտի խօսենք, զաւակս, ան անպիսի դրական յատկութիւններու տէր է, որ իր նմանը չունէ. մենք անարժան ինք անոր քննադատելու։

—Բայց եթէ նա կաթողիկոս ընտրուելու լինի։

—Առանկ բան չըլլար. ազգը խենթ է, ինչ է, առանկ խելօք մարդու ներկայութեամբը մենք այլևս ինչ ընելու ենք. եթէ նա կաթողիկոս ըլլայ—այլևս մենք բան մը չարժենք։

ԻՆՉՊԷՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

—

Ղուբայից, մի պարոն, Աւագ Տէր-Ղազարեանց ստորագրութեամբ «Սուրհանդակի» խմբագրութեանն է ուղղում մի նամակ, յիշեալ թերթում տպելու, ազգի գլխին երկար մի ճառ խօսելուց յետոյ, առաջարկում է կաթողիկոս ընտրել մի շատ ձեռընտու սիստեմով։

Նա իր նամակը սկսում է այսպէս.

«Առ մեծապատիւ խմբագրին «Սուրհանդակ...»

«Սիրելի հայրք իմ, եղբայրք իմ, ազգք իմ, ամենայն հայք, մեծամեծք ու փոքրունք, ուսեալք անուսումք, հոգևորք և և աշխարհականք. ահա ես 57 կամ 59 տարեկան մարդ եմ... և այլն։

Նա ասում է իր նամակի մէջ, որ ինքը շատ է յաճախել ժողովների, շատ երէցփոխներ, ժամկոչներ, տէրտէրներ, գվորնիկներ է ընտրել մեր եկեղեցիների համար. ու այդ պատճառով էլ ընտրելու կուրսը աւարտել է։ Նրա ասելով, դուրս է գալիս, որ եթէ մենք Գրիգոր Լուսաւորչից սկսէինք այդ սիստեմի ընտրութիւններով ջոկել մեր կաթողիկոսը, հիմա տասչորս շահի առաջ կը լինէինք։

Նամակի վերջը նա իբրև յաւելուած տալիս է հետևեալ բեցէպը կաթողիկոսական ընտրութեան համար։

«Հիմա սիրելիք, ես իմ կողմից կաթողի-

կոսական ընտրութիւնը այսպէս խորհուրդ կըտամ կատարել՝ ընտրել 12 եպիսկոպոս և արքեպիսկոպոս, որք են՝ 1. Սիսի կաթողիկոսն 2. Աղթամարայ կաթողիկոսն. 3. Կոնստ. պատրիարքն, 4. Երուսաղ. պատրիարքն, 5. կաթողիկ. տեղապահն, և այլն, և այլն, որն իմանում է ազգն առանց կողմնապահութեան և առանց երեսպաշտութեան: Սրանց հրաւիրեն Էջմիածին. բոլորը գան, ներկայանան. յետոյ 12 թղթի կտոր համահաւասար կտրած կլորած, որ ամենևին մէկն միւսից չջոկւի և թղթի միջին գրած միայն մէկումն՝ պատարագիչ. դըրանք եկեղեցի եկած ժամանակն այդ թուղթերն կլորած մէկ պօտնոյնի մէջ՝ «Հայրմերն» ասին և համեցէք անեն՝ մէկ մէկ վերցնեն, որին ընկաւ պատարագիչ, նա պատրաստւի, որ էքսն պատարագ անի, և նմանապէս նորից 12 թուղթ կտրեն, կլորեն, դարձեալ համահաւասար, որ ամենևին մէկն միւսից չջոկւի. էքսն այն պատարագիչ եպիսկոպոսն, որն պատարագ կանի և պատարագի մէջ կըյիշի նրանց անուններն և կըխնդրի Աստծուց, որ Աստուած ընտրէ նրանցից իր արժանին. ի հարկէ պատարագիչ եպիսկոպոսն էլ ի թիւս նրանց կըլինի: Պատարագն վերջանալուց յետոյ այն 12 կլորած թղթի մէջին միայն մեկումն կըլինի գրած՝ «ընտրեցար Ամենայն Հայոց կաթողիկոս»: Պատարագից յետոյ բոլորն կըզգեստաւորւեն, կըկանգնեն սեղանի առաջ, խաչով, խաչվառով, քշօցով, մոմակալով կըսկսեն թափոր անել ինչպէս օրէնքն է, բայց ի միջի թափորին հետևեալ խօսքերով:

Այստեղ գրում է մի շարք աղօթքներ, որ երեք անգամ պէտք է կրկնւի, յետոյ 12 կլորած թղթերը պէտք է բաժանւի 12 եպիսկոպոսներին և որին որ ընկաւ քւէն, այսինքն լատարիէն, նա պէտք է լինի ԿԱԹՈՂԻԿՈՍ»:

Հաւատացնում եմ ձեզ, որ շատ լաւ սիստեմ է: Այն ժամանակ ո՛չ «Մշակը» կըհայհոյի «Հորիզոնին», ո՛չ ընդհակառակը. ո՛չ փողեր կըծախսւի: Մանաւանդ, որ այն մնացած 11 եպիսկոպոսներն էլ կըմնան Էջմիածնում, էլ յետ չեն գնայ, կըմնան զապասնոյ սկլադում, որպէսզի յետագայ ընտրութիւններին լօտօրէյ-ալլեգրում ցուցադրւեն:

Շատ լաւ սիստեմ է...

Բանի դեռ ուշ չէ, այս սիստեմի վրայ ենք դարձնում Էջմիածնի պատգամաւորների ժողովի ուշադրութիւնը:

Գիւղում

—Տօ դո՛ւ, Կարօ, ինչի՞ այդպէս խոր գլուխ ես տալիս այդ տղային:

—Նա իմ կեանքս փրկել է:

—Ինչպէ՞ս:

—Որսի ժամանակ նա ինձ վիրաւորեց. հիւանդանոցում ասացին, որ եթէ մի քիչ էլ վերևից դիպչէր գնդակը, բանս բուրդ էր:

ԱՐԱԲԱԿԱՆ ՀԷՔԻԱԹՆԵՐ

... Իսկ երբ եկաւ միւս գիշերը, ուղղափառների հզօր տէրը, կատարելով այն բոլորը, ինչ թելադրում է Ղուրանը և մինչև անգամ այն, ինչի մասին չէ յիշւում Ղուրանում, քայլը դէմքով դիմեց իր չնաշխարհիկ ամուսնուն:

— Դէհ, հերի՛ք է: Վերջացնենք: Վաղուց է մենք իրար հետ չենք զրուցել, թէ ի՞նչպէս է, առհասարակ, աշխարհիս բանը և ի՞նչ է կատարւում այնտեղ: Դէհ, սկսի՛ր Շահրազադ, հոգեակս, և խնդրում եմ, մի՛ քաշւիր: Ես այսօր բաւական սահմանադրական տրամադրութեան մէջ եմ և կարող եմ մի քանի բան բոլորովին ողորմածօրէն լսել:

Շահրազադը քաշ գցեց իր գեղեցիկ աչքերը և զանգակի ձայնով ասաց.

— Օ, հզօրագոյն խալիֆ, մարգարէի կըռնատակի դու փառաւոր ճմազ, աշխարհումս վատ բաներ են կատարւում.—պարսիկների բանը շատ վատ է:

— Նրանք մերոնցի՞ց են:

— Ի հարկէ: Օրէնքը նրան բացարձակապէս արգելում է խոզի միս գործ ածել, իսկ նրանք հիմա պէտք է ամեն տեսակ խոզերի հետ գլուխ դնեն:

— Այդ ինչո՞ւ համար:

— Էհ, էլի հին բան է. նախկին շահը գընացել էր մշտապէս ապրելու Օդեսա, իսկ այնտեղ նոյնպէս լաւ չէր բանը.—ժանտախտ, Տոլմաչև և այլ տարերային պատուհասներ:

— Ի՞նչի համար տարերային:

— Իսկ դրանք, հզօրագո՛յն խալիֆ, հիմա երկուսն էլ հնազանդւել են՝ ոչ ժանտախտ, ոչ Տոլմաչև...

— Լսի՛ր, Շահրազադ, հոգեակս, դու լաւ կին ես, բայց հանաքներ մի՛ անիր: Յետո՞յ, շահը ի՞նչ եղաւ:

— Բնական է, շատ չկարողացաւ մնալ Օդեսայում և պո՛ւկ դէպի Վիեննա: Իսկ Վիեննան, օ, դա խաղուն քաղաք է, մարդիկն էլ խաղուն: Եւ ահա շահը մտածեց՝ արի, ասում է, ես նորից նուաճեմ Պարսկաստանը: Ի դէպ, ասում է, Լիօնի բանկի իմ փողերը վերջանալու վրայ են, իսկ նոր ստանալիք չկայ:

— Եւ նուաճե՞ց:

— Ոչ բոլորովին: Պարսիկները բոլորն էլ վարակւել են մի անախորժ հիւանդութեամբ: Այդ հիւանդութիւնը կոչւում է «Մէջլիս» և շատ գրգռում է մարդուս:

— Յետո՞յ:

— Ահա պարսիկները հանուր ջանքերով, ինչպէս ասում են նզովեալ գեաւուրները, փող հաւաքեցին նախկին շահի համար...

— Իսկ շա՞հը:

— Ստացաւ ինչ հասնելու էր ու ծլունկ եղաւ:

— Ամօթ:

— Ի՞նչն է ամօթ, հզօրագո՛յն արքայ:

— Առհասարակ ամօթ է, երբ մեր պարսկի բանը բուրդ է: Դու ինձ վրդովեցրիր, Շահրազա՛դ, հոգեակս:

— Իսկ ես դեռ ուզում էի [illegible] մարգարէի ձախ ոտնի տակ, Թուրքերի մասին, թէ ի՞նչպէս են նրանք պատերազմում իտալացիների հետ:

— Չեմ կարող: Դու այնպէս ինձ վրդովեցրիր, այնպէս վրդովեցրիր, որ ես հիմա, գուցէ, ամբողջ օրը մելամաղձոտ լինեմ: Հեռացի՛ր, աղաւնեակս, քո սենեակը, թէ չէ ես, ինչքան էլ քեզ սիրելիս լինեմ, մելամաղձութեան մէջ կարող եմ հրամայել, որ քեզ քառասուն երկու բոպէյով ձող նստացնեն... գնա...

Եւ չնաշխարհիկ Շահրազադը, արևելեան դիցուհու խորունկ հրաժեշտ տալով, մեղմ հեռացաւ:

... Չէ՞ որ արևելեան բոլոր զւարճութիւններից ամենապակասը ձող նստացնելն է:

Շահրազադ № 2.

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

Նախ քան խօսել կըսկսեմ, միշտ էլ ինքս ինձ հարցնում եմ՝ մ՛րդեօք, արտասանած խօսքերիս համար յետագայում ես չե՞մ փոշմանելու:

Պիւթագորաս

—

Ես արդէն գիտեմ, որ գրքերը կարող են գիտնական դարձնել, բայց մարդ դարձնել՝ երբեք չեն կարող:

Լիսսինգ

—

Ով շատ է գրում՝ ճկուն է, ով քիչ է գրում՝ անբարտաւան է:

Հիպպել

—

Քիչ կարդացէք, քիչ սովորեցէք, շատ մտածեցէք: Սովորեցէք թէ վարժապետների մօտ և թէ գրքերից միայն այն, ինչ որ ձեզ հարկաւոր է և ինչ որ ուզում էք գիտենալ.

Լև Տոլստոյ

—

Ազատ մարդն աւելի շատ՝ կեանքի մասին է մտածում, քան մահւան:

Սպինոզա

—

Երիտասարդութիւնը պարտաւորեցնում է հաւատալ, յուսալ և սիրել:

Լէօն Դը-Տէնսօ

—

Ինձ դատեցէք ոչ թէ ինձ հետ եղէք, այ[լ] իմ մէջը:

Ադամ Միցկևիչ

—

Ուր կայ մարդ արարածը, այնտեղ նրան բարիք անելու դէպքն ևս կայ:

Սենեկա

—

Ցերեկն այնպէս վարւիր, որ գիշերն հանգիստ քուն ունենաս. իսկ երիտասարդութեան ժամանակ այնպէս, որ ծերութիւնդ հանգիստ ու խաղաղ անցնի:

Հնդկական առած

Թարգմ. Գ. Բաբուրեան

— Պարոն Կարապետ, քու խելքովը էսօր լաւ կաթողիկոսացուն ո՞վ է.

— Իմ խելքովը՝ ոնխելք կաթողիկոսացուն ուփրօ լաւ է։

— Ի՞նչի է.

— Զունքի օսմանլուի հօյերու կամքը էտէնց է։

Ի՞ՆՉ Է ԲԱԽՏԸ

—

Եթէ կուզէք
Շուտ իմանալ,
Թէ ինչ բան է
Այս մեր բախտը,
Պէտք է լսէք
Ինձ ուշադիր։

Այս մեր բախտը
Շատ նման է
Մի չաղ, հաստլիկ
Խոզի պոչին,
Որին շատերը
Կըցանկանան
Ձեռքով բռնել,
Որը շատին
Չի յաջողւում,
Որովհետև
Խոզի պոչը
Միշտ ծածկւած է
Իւղի չերտով.
Եւ բռնելն էլ
Շատ դժւար է…

Իսկ բռնելիս
Մին էլ տեսար
Սայթաքելով
Մարդու ձեռքից
Դուրս է պրծնում,
Հէնց այդպէս էլ
Բախտն է անում,
Թէ որ մարդկանց
Ձեռքն է ընկնում։

Լ,ոսնս № 30-ից

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ·

—

Դերասան—«ձգողական» բարեգործական ոյժ, որ բռնում է օձիքդ, բայց սովորապէս, երևան է գալիս միմիայն աֆիշում։

Բազար—անպէտք բաների հաւաքածու, որ հասարակութեան գլխին են կապում վաճառող կանայք, որոնց դեկոլտէն որքան լայն է, այնքան էլ գները բարձր են։

Վաստակ—մի բան, որ յաճախ ընկնում է նրա գրպանը, ում համար չէ նշանակած։

Կոունկ—շատ բարեգործական ընկերութիւնների խորհրդանշան։

Զարճալիք—այն, որ անում են տխրող մարդիկ մերձաւորներին օգնելու համար։

Մտախպրուլթիւն—այն, որով աւելանում են բարեգործութեան գործակալները։

Երկնային մանանա—այն, ինչով պէտք է սնունդ առնեն բարեգործութիւն հայցողները։

Կարիք—չունևորների արատ, որը սնունդ է տալիս ապահովւածների առաքինութեանը։

Ատամնաոուլթիւն—այն, որով բարեգործական զւարճութիւնները առան հասարակութեան ատամները։

Հովանաւորուհի—պատւաւոր կին, շրջապատւած երիտասարդ կաւալերներով, որոնց վրայ նա թափում է իր առատ բարեգործութիւնները։

Անհեթեթուլթիւն—մի բան, որ հաւասարապէս տիրում է բարեգործների գլխում և հաշւում։

Յաջողուլթիւն—ուրիլ մի քանի կոպէկներով, որը սովորաբար տրւում է աղքատներին։

„Թ“.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Ուրբաթ, դեկտեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 8 և կէսին երկու և երեք քառորդ րոպէ անց, ըստ Փարէնյայտի 20 աստիճան ջերմութեան տակ հայ դրամատիքական խումբը ներկայացրեց «Տրիլբի» դրաման։

Այդ դրամայի մէջ ցոյց է տրւած թէ հիպնոտիզմը ինչպիսի ազդեցութիւն է ունենում մարդուս վրայ։

Առաջ ես չէի հաւատում հիպնոտիզմին, բայց երբ բեմի վրայ տիկ. Մայսուրեանին տեսայ այնպէս գեղեցիկ կերպով հօպնոտիզացած, ես ակամայից մտածեցի, երևի այդ է պատճառը, որ 20-րդ դարում անզգայնացել է հայկական կեանքը։ Այլապէս ինչով բացատրել կաթողիկոսական ընտրութեան այս նորաձև կոմեդիան, լրագրների իրար հետ սէրով և համերաշխ ապրելը, մանաւանդ Թիֆլիսում, որ մայրաքաղաքի թերթերի նախանձն անգամ շարժեցնում է, այս բոլորը հիպնոտիզմի հետևանք է։ Եւ ես կարծում եմ, ում որ ուզում է կաթողիկոս ընտրենք, թէկուզ Չինաստանից էլ բերել տալու լինենք, դարձեալ հիպնոտիզմի կենթարկւի, որովհետև հայկական մըթնոլորտը իրեն ներշնչող մարդկանց համամիտ սին պղտորւել և այլանդակւել է։

Խօսքս իհարկէ, թիւրիմացութիւնների մասին չի, ինչպէս օրինակ «Խաթաբալայում» գրել էի թէ պ. Սամսոնյեանը «Ջոնջոլ» է ներկայացնում, սակայն, բանից դուրս եկաւ, որ ես էլ Արշակ Միլովի նման թիւրիմացութեան մէջ եմ ընկել։ Դա մասամբ ճշմարիտ է, իսկ ընդհանրապէս, ինչպէս նկատում ենք, պ. Սամսոնյեանը սեկցիայի անդամների մէջ ամենաեռանդուն գործիչներից մէկն է։ Եւ գիտէ՞ք… Ա՛խ, փիլիսոփայութեան յետևից ընկնելով բեցենզիայիս թելը կորցրի։

Ներկայացումը բաւականին յաջող անցաւ, համարեա թէ բոլոր դերասաններն էլ լաւ էին խաղում ու պարում, թէև ոչ ուղունդարա և ոչ էլ շալախօ ածող չը կար։ Սակայն այն զովասանքները, որ տալիս են Շահխաթունուն, կարծում ենք, որ աղ ու հացի հետևանք պիտի լինեն։ Ինչ ուզում էք ասացէք, ես դրան պոչը խուզած 3 էլ չեմ դնիլ։

Գ. Աւետեանի դրիմը շատ տեղին էր, նա ատամները թափած խսկական քաւթառ մարդու էր նմանում։ Լաւն էնէ, որ այդ ներկայացմանը կինը այդտեղ չէր գտնւում, թէ չէ սփաթից կը վախէր ու երեկոյեան տուն չէր թողնի։

Թատրոնի օթեակներից մէկում բազմել էին կաթողիկոսական ընտրութեան առթիւ Տաճկաստանից եկած աշխարհական և հոգեւորական պատգամաւորները։ Պատմում են, որ դրանք եկել էին տեսնելու թէ դերասաններից ո՞րը կարող է լաւ կաթողիկոսացու լինել, որովհետև իրանք էլ նկատում են, որ ներկայիս կաթողիկոսական ընտրութեան ցեբեմոնիան կոմեդիայի է վերածւել։

Խաղը վերջանալուց յետոյ վարագոյրը իջեցրին։

Փարեմուզ.

ԺԱՆԸՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՇՈՒՐՋԸ

—

Միջին փողոցում, Հաջի-բաբայի «Ֆլօրա» ճաշարանում նստած՝ ես, դամսկի պարտնօյ Արտաշը և նրա ընկեր Գէօրգը մի փառաւոր ճաշկերոյթ ունէինք։ Հաջի-բաբն էլ եւ բեմն-երբեմն, երբ մուշտարիները թեթեւանում էին, րոպէապէս մօտենում էր մեզ մի բաժակ գարեջուր չողլամիշ լինում ու գնում էր իր գործին։ Ճաշկերոյթի առիթը Հաջի-բաբի մաղարիչն էր, որ իր զօքանչի համար դամսկի պարտնօյ Արտաշին կարել էր տւել շանտիկլեօրի մի զգեստ։

Մեր քաղցր մասլահաթի ժամանակ ճաշարան մտաւ մի աւստրիացի. մենք հետաքրքրւեցինք նրանով և իմացանք, որ նա շրջում է ամբողջ աշխարհը, երկրագնդիս բոլոր քաղաքները։ Այդ մարդուն տեսնելը մեր մէջ մի անհագին ծրագիր առաջ բերեց։ Մենք ևս որոշեցինք այդ աւստրիացու նըման ման գալ աշխարհիս բոլոր քաղաքները ոտով, առանց մի կոպէկ փող վերցնե-

լու մեզ հետ։ Վճռեցինք ճանապարհորդութիւնը կատարել 10 տարեայ ընթացքում սկսած նոյն օրուանից։ Վճուեց ճանապարհ ընկնել ճաշը վերջացնելուց անմիջապէս յետոյ։

—Մենք, պարոններ,—սկսեց մի բաւականին երկար ճառ մեր դամսկիյ պարտնոյը,—կարող ենք հէնց այսօր և եթ ճանապարհ ընկնել դէպի Ղարս, այնտեղից, Ղալայչուց մի քիչ փողից-մոզից վերցնելուց յետոյ, կանցնենք Տաճկաստան, յետոյ... Լեհաստան, յետոյ Արաբստան, յետոյ Եապոնիա...

—Ոչ,—նկատեցի ես,—դու դեռ լաւ ծանօթ չես երկրների հետ։ Մենք դեռ ամենից առաջ պիտի գնանք մի որևէ քաղաք, այնտեղ պէտք է որոշենք դէպի որ կողմը շարունակելը։ Օրինակի համար ամենից առաջ ոտով պէտք է գնանք Նաւթլուղ, յետոյ մենք այնտեղ կորոշենք ուր գնալները։

—Կեցցէս, կեցցէս,—ծափահարեցին ինձ ընկերներս,—մեր ընկերը շատ լաւ է ասում, գնանք ոտքով Նաւթլուղ։ Ու պատրաստեցինք ճանապարհ ընկնելու։

—Տղէք,—ասաց Գէորգը. — գրպաններս դատարկենք, փողերը յանձնենք Հաջի-բաբին մինչև մեր վերադարձը։

Նայեցինք գրպաններս, բոլոր անկիւնները թափ տւինք, փողի նշոյլ չկար, կարիք էլ չկար, որ լինէր, որովհետև մենք ճանապարհորդելու էինք անփող։ Երկար ու բարակ մնաս բարովներից յետոյ ճանապարհ ընկանք դէպի Հալաբար։ Այդտեղից սկսեց մեր ոտով ճանապարհորդութիւնը։

Հասանք Լուսաւորչի եկեղեցու մօտ. մեր ընկեր Գէորգը արդէն յոգնել էր։

—Տղերք, ես յոգնեցի, աւելի լաւ կըլինի մի քիչ հանգստանանք։ Ասաց ու նստեց մի դրան մօտ դրած մեծ քարի վրայ։

Մենք ծիծաղեցինք նրա վրայ։

—Եթէ դու չես կարող մինչև Նաւթլուղ գալ ոտով, ինչպէս կարող ես ամբողջ աշխարհը շրջել։ Այս խօսքերից ամաչեց ընկեր Գէորգը ու շարունակեց ճանապարհը։

Վերջապէս մենք հասանք սպանդանոցի մօտ, որտեղ վերջանում էր տրամվայի գիծը. այդտեղից դէպի ուր պէտք էր գնալ, այդ մենք չգիտէինք, մնացել էին շշմած։

Ցանկարծ մեզ պատահեց խաթաբալական կուսակցութեան շէֆ, մեր պաշտելի «Խաթաբալա»-ի տէր ու տնօրէն գերազնիւ Գասպար աղա Կալատուզովը։ Մենք, ի հարկէ, ծանր գլուխ տալուց յետոյ, պատմեցինք մեր մտադրութեան մասին. նա գլուխը մտածկոտ կերպով մաքացրեց և մի քանի վայրկեան խելքը շուռ ու մուռ տալով մտածելուց յետոյ խորհուրդ տւեց վերադառնալ մեր տները։

Մենք պնդեցինք մեր ասածի վրայ։ Նա չհակառակուեց. միայն առաջարկեց մեզ միմի բաժակ բան-ման խմել է լաւ կշտանալ, որպէսզի ճանապարհին չքաղցածանանք։

Գասպար աղայի հետ մտանք սպանդանոցի մօտ գտնուած մի պանդոկ։ Թէև մենք փող չունէինք, բայց չէ՞ որ Գասպար աղան էր հիւրասիրում մեզ։ Նա հրամայեց գինի, ձուկ, ձու, լոբի, ինչ որ կուզէինք տալ մեզ, որ իսկոյն կատարուեց նրա հրամանը։ Վճարեց այդ բոլորի համար և ինքը հեռացաւ, ասելով՝ որ վաղը կըհանդիպենք մենք իրար...

Մենք ուշադրութիւն չդարձրինք նրա խօսքերի վրայ, այլ ագահաբար ուտում ու խմում էինք։

Մտածում ու մասլահաթ էինք անում, թէ ինչպէս կընդունեն մեզ Պոլսում հոսհոսանները, թէ ինչ մեծ ընդունելութիւններ կունենանք օտար պետութիւնների կողմից... կենացները շարունակւում էին, գինին վերջանում էր, մենք նորից էինք պահանջում... Գէորգը է Արտաշը արդէն հարբած էին, թէև ես էլ պակաս չէի նրանցից...

Այսքանը յիշում եմ, որ խանութպանը եկաւ ու ասաց, որ ժամանակ է խանութը փակելու, այնպէս որ մենք պէտք է վճարենք չորս բուբլի СЪ ЧѢМЪ ТО և հեռանայինք։

Չորս բուբլի՞, այն էլ СЪ ЧѢМЪ ТО՞... ո՞ւրտեղից։

Սկսեց կռիւը պանդոկապետի հետ. մենք մի քիչ ծեծուեցինք և այնուհետև շարունակեցինք մեր ճանապարհը մինչև ոստիկանատուն, իսկ այնտեղից այլևս՝

Միսս չի

—

Յ. Գ.—Այս նամակս գրում եմ մահճակալիս վրայ պառկած, կողքերս ջարդուած, վերարկուս Նաւթլուղ թողած և աշխարհիս քաղաքները շրջելը գլխիցս հանած։

Նոյն

ՀԱՑՐԵՐ ԵՒ ԶԱՒԱԿՆԵՐ

—

—Է՜հ, ինչ ասել, հայրս համ պրոֆեսոր է, համ գաղտնի խորհրդական և շատ էլ գրքեր է գրել, բայց անկեղծ ասեմ, նա բթամիտ է և անշնորք։

—Իսկ ինչ։ Դու դեռ չգիտես, ախր, թէ ինչ մարդ է հայրս։ Թող, ասում եմ, քո յիմար բնախօսութիւնը, պարապուիր պրակտիկայով։ Չէ՞ որ այդ բանը քեզ կլոր քսան հազար կըտայ տարեկան։ Չի համաձայնուում, քաւթառ անասուն։ Ռոճիկն, ասում է, իրան բոլորովին հերիք է։

„Ռ."

Հիւանդութեան որոշում

Բժիշկը.—Ձեր աղջիկն առանձին մի հիւանդութիւն չունի. նրան ուղղակի հարկաւոր է զարճանալ... Այնպէս... փոքրիկ փոփոխութիւն... Դուք հասկանում էք ինձ...

Մայրը.—Օ, այո, պ. պրոֆեսոր, դուք, ի հարկէ, ենթադրում էք ազգանունի փոփոխութիւնը.

Ռ.

— Դարչո իմացիլ ես, էշմիածնում վուր ժողովք կայ։

— Հա, վունց չէ, կերել էլ իմ։

— Իժում էն էլ գիտես, թէ ինչին ասում, էն դեպուտատներին, ինչին։

— Նրանք ի՞նչին ասում, նրանք ինչվուր «Հորիզոնն» է ասում էնին անում. «Հորիզոնն» ասում է, անխելք մարթ է հարկաւոր, կօսէ, վուր մենք կանանանք լալայ, կօսէ, նրանք էլ ջուղարին տալի, բաշուստայ, կօսէ։

— Էտինց ինչի ին անում է։

— Անխիլք իս Սաքուլ. բաս չիմացար. հասարի բան է, հասարի...

ԱՇԱԿԵՐՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

—

Ուսուցիչը կանչում է աշակերտին, որ ամբողջ շաբաթ դպրոց չէր եկել և հարցնում է։

—Ազիկեան, ինչու՞ երկուշաբթի օրը դպրոց չէիր եկել։

—Պարոն ուսուցիչ, երկուշաբթի օրը անձրև էր գալիս, ցեխ էր...

—Լաւ, իսկ երեքշաբթի օրը ինչու՞ չէիր եկել։

—Երեքշաբթի ծրը. երեքշաբթի հայրիկը ծեծում էր մայրիկին և վկայ էր պէտք։

—Շատ լաւ, իսկ չորեքշաբթի։

—Պարոն, չորեքշաբթի օրը փողոցում մի «ժուլիկ» էին բռնել, մայրիկը կարծելով, որ հայրիկին են բռնել, ինձ ուղարկեց լուր բերելու և ես ուշացայ դասերից։

—Իսկ հինգշաբթի։

—Հինգշաբթի ամբողջ օրը մենք զբաղուած էինք գողացածը սաղացնելով...

—Շատ լաւ, իսկ ուրբաթ օրը ինչով էիր զբաղուած, որ դպրոց չէիր եկել։

—Ուրբաթ օրը մտածում էինք թէ առաջիկայ շաբաթ ինչ գործով զբաղուենք։

—Իսկ շաբաթ ծրը։

—Շաբաթ օրը! պարոն վարժապետ, չէ՞ որ շաբաթը մի օր էլ հարկաւոր է հանգըստանալ։

Պ.ահան Ա. Ա...ն

ՊԱՐՄԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ



—Մի բան, որ տեղ է Իրանի թագաւորութիւնը.
—Գրքերում կայ, բայց, թէ քարտեզներում և թէ երկրագնդի վրայ այլևս չկան.
—Ի՞նչի.
—Շնորհիւ...Մէջլիսի և...

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

—Կաթողիկոսական հարցը մեզ համար կեանքի և մահու նշանակութիւն ունէ. եթէ մեր մարդը չլինի՝ մեր տունը կը քանդուի։
—Մենակ կը քանդուի, քա խայտառակութիւնը։
—Այո, ծանր է դրութիւնը։

ՄՏՔԵՐ

(Խորք տոպրակից)

—

— Ամենայն մի սէր ջանք է թափում յաւիտեան լինելու. նոյն իսկ նա, որը երկու ժամ հազիւ է գոյութիւն ունենում:

— Ասում են, որ կանայք աւելի ուժեղ կերպով են սիրում, քան տղամարդիկ: Անենք դա դեռ ստորագրութեան կարօտ է: Մենք այսքանը միայն գիտենք, որ կանայք իրենց սիրոյ մասին սիրում են բարձրաձայն գոռալ:

— Երբ մենք սիրում ենք կնոջը՝ այնպէս ենք կարծում, թէ հրեշտակի ենք պատահել: Երբ դադարում ենք սիրելուց՝ մեր ցանկութիւնն է շուտով ազատուել սատանայից:

— Սիրուն ուսանողուհու գլխաւոր նպատակն այն է, որպէսզի իրեն որքան կարելի է լաւ ուսումնասիրեն:

-- Համբոյրը սիրոյ ծաղիկն է. նա պտուղին է պատկանում:

Համայնացրեց

Եզոպ ծայրայեղ վարդապետ.

ԿՆՈՋՍ ԱՄՈՒՍԻՆԸ

—

Ես ծանօթացայ իմ կնոջս ամուսնու հետ...

Դուք այժմ կըզարմանաք, սիրելի ընթերցող, «ինչպէս թէ ես ծանօթացայ իմ կնոջս ամուսնու հետ». ես ուզում եմ ասել իմ նախկին կնոջս ամուսնու հետ:

Ես ամուսնանալով, կնոջս հետ երկար չապրեցի. լինելով ազատ սիրոյ լիգայի համակրողներից մէկը, ինձ խորթ էր թըւում շարունակ կենակցել մէկի հետ: Ճըշմարիտն ասած, ես ինքս էլ էի զարմացել ինձ վրայ, թէ այդ ինչպէս պատահեց, որ ես ամուսնացայ. ինձ նման մի դօն-ժուան և ամուսնութի՜ւն... դա արդէն սկապըրիզ է...

Եւ ի հարկէ, պարզ էր որ ես երկար չէի կարող ապրել կնոջս հետ միասին...

Ահա մի գեղեցիկ օր մարդ և կին վիճեցինք, և վէճը սուր բնաւորութիւն ստանալով, մեր ամուսնալուծութեան առիթը ներկայացաւ...

Եւ մենք բաժանուեցինք:

Ես այդ միջնադէպից յետոյ հեռացայ այդ քաղաքից, որտեղ ապրում էր կինս. և այդ օրից բացուեց իմ սիրային արկածների շրջանը:

Նախ քան իմ արկածներից մէկի պատմելը պէտք է ասել, որ ես Բ... քաղաքումն էի, և մի ընկերոջից նամակ ստացայ,— որ կինս արդէն ամուսնացել է:

Այժմ պատմեմ ձեզ այդ հետաքրքիր արկածը... գուցէ դուք ինձ յիմար, կամ տարօրինակ բնաւորութեան տէր մարդ անուանէք, բայց այդ ինձ չէ հետաքրքրում...

Մեր ամուսնալուծութիւնից արդէն անցել էր երկու տարի... երբ ես նորից վերադարձայ նոյն քաղաքը, որտեղ ապրում էր իմ նախկին կինս իր նոր ամուսնու հետ:

Մի գեղեցիկ մայիսեան օր ճաշից յետոյ դուրս եկայ և գնացի քաղաքային այգին զբօսնելու:

Յանկարծ այգում աչքովս ընկաւ մի զոյգ... կին և տղամարդ...

Եւ ինչ էք կարծում, երբ նրանք արդէն մօտենում էին ինձ, ես քար կտրեցի...

Այն կինը, որ թեւանցուկ գալիս էր պարոնի հետ, գիտէք ով էր... իմ նախկին կինը...

Ես վճռեցի մօտենալ և բարևել...

Իմ նախկին կինը նկատելով ինձ, շփոթուեց. մօտենալով ինձ բարևեց և ասաց.

—Ա՜խ, պ. Ալէքսանդր... այդ դուք էք...

—Այո, ես եմ...

—Ծանօթացէք խնդրեմ,—ասաց ինձ ցոյց տալով ամուսնուն,—ամուսինս է...

Ես ձեռքս մեկնեցի այդ ոչ երիտասարդ պարոնին և ասացի.

—Թոյլ աւէք ներկայանալու... կնոջս ամուսնուն...

Կնոջս ամուսինը, չշփոթուելով ձեռքը մեկնեց ինձ և ասաց.

—Ը՜մ... ներեցէք... Գրիգորիս Տուզեան. բայց որքան յայտնի է կնոջս ամուսինը արդէն մեռած է...

—Ո՛չ, սխալուած էք... ներեցէք... մեռած էր, բայց վերադարձաւ յարեաւ...

Նա իր ապուշ հայեացքը ուղղեց իմ նախկին կնոջս, և որպէսզի այդ դուրս գար և մի բռնկասած լինէր, նա դարձաւ ինձ և ասաց.

—Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթալովս, խնդրեմ այս երեկոյ գաք մեզ մօտ ընթրիքի...

Նրանք տուին ինձ հասցէն և մենք բաժանուեցինք...

Երեկոյեան ժամը 9-ին ես արդէն պ. Տուզեանի տանն էի... մենք սկսեցինք ուտել, խմել, երգել մինչև ուշ գիշեր...

Ես լաւ տպաւորութեան տակ դուրս եկայ կնոջս ամուսնու տնից, և քայլերս ուղղեցի իմ բնակարանը...

Գնում էի և մտածում...

Ա՛յ քեզ սիւպրիզ... Չէ, անպատճառ պէտք է նորից ձեռք գցել նախկին կնոջս... բայց որքա՜ն նա գեղեցկացել... որքա՜ն հրապուրիչ է դարձել այժմ... քիչ էր մնում որ խելագարուէի...

Ես մինչև անգամ սկսեցի նախանձել այդ քաւթառին, որ այժմ իմ կինս նորա «սեփականութիւնն» էր... ամեն կերպ մտածում էի, թէ ինչ անել, որպէսզի կարողանում ետ բերել կնոջս...

Այժմ ես օգնութեան կանչեցի իմ դօնժուանական ամբողջ փիլիսոփայութեանս, որպէսզի ես նորից հասնէի իմ նպատակին...

Ես վճռեցի բացատրուել նախկին կնոջս հետ և ներողութիւն խնդրել անցեալի յիմարութեանս համար...

Եւ ես բացատրուեցի... այսինքն ուզում եմ ասել ոչ թէ ես բացատրուեցի այլ նա բացատրուեց:

Այսպէս, երբ մի օր գնացի կնոջս ամուսնու տունը... ոչ ոք չկար տանը... ներս մտայ հիւրանոցը. նախկին կինս նստած դիւանի վրայ ինչ որ մտածում էր...

Երևի ես եմ նրա մտազբաղութեան առարկան, որը և ճշտուեց... Ինձ նկատելուն պէս վազեց դէպի ինձ... ես ձեռք մեկնեցի բարևելու... բայց ճ հրաշք... յանկարծ ես իմ պարանոցիս վրայ զգացի կանացի փափուկ ձեռքերի հպումը... նա ամուր փաթաթուելով պարանոցովս կրքոտ համբուրում էր և ականջիս տակին մրմնջում...

—Ես քոնն եմ... ես քոնն եմ...

Ես արդէն եօթներորդ երկնքումն էի... մտքովս անգամ չէր անցել, որ այդպիսի սիւրպրիզ կարող էր պատահել...

Գրկելով նրան, ես ամուր սեղմեցի կըրծքիս և մենք...

Յանկարծ դուռը բացուեց և շէմքին երևաց կնոջս ամուսինը...

Նա նկատելով մեզ գրկախառնուած ծիծաղեց...

—Սիրելիս, ասաց կինս,—շնորհաւորիր մեզ, մենք արդէն հաշտուեցինք:

Եւ մենք... այսինքն ես նախկին կինս թևանցուկ դուրս գալով պ. Տուզեանի բնակարանից, դիմեցինք դէպի իմ բնակարանը...

Եւ ես դարձեալ սկսեցի սիրով ապրել իմ նախկին կնոջս հետ...

Ահա իմ սիրային արկածներից մի միջնադէպ, որով և վերջացաւ իմ սիրային աշխարհի արկածները և ընդմիշտ փակուեցան իմ առաջ նրա դռները...

Խոսէն-Ժուան-դը-Բիւլ



Փեսան զոքանչին

—Բայց գիտէք, մայրիկ, ձեր և արևի մէջ շատ մեծ նմանութիւն կայ:

—Հնարեցիր էլի. ասա, խնդրեմ, ի՞նչի մէջ է նմանութիւնը:

—Ինչպէս արևին, նոյնպէս և ձեզ վրայ նայելուց՝ մարդու երեսը կնճռոտւում է:

Վահան Ս.. Ս...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՊՈՆ «ԳԻՐԱՆԻՆ»
— Ե. ԲԵԼԼԻ ԵՒ ԸՆԿ.» ՄՈՍԿԻԷ —
Պահեստը Թիֆլիսում, Գալաւինսկ. պր.
— Պահանջեցէք ամենուրեք —
52—3

МАГАЗИНЪ
КОМПОЗИЦІЯ
Тифлисъ, Пушкинскіи пассажъ № 8.

громадная экономія
шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ
По фабричнымъ цѣнамъ
Передѣлка въ любой фасонъ безплатно
Продаются портняжныя принадлежности, как-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣ.
ИМѢЕТСЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ
Остерегайтесъ поддѣлокъ и подражаній
Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8
0—17 (о. и.) М. А. КАЛТАКЯНЪ

Первокл. ресторанъ
„АННОНА“

„Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ,** участіемъ пѣвицъ —г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдъ—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты.

Получены Сибирскіе рябчики и устрицы.

52—28

Ա. \ Տ. „ԳՐԱՄՄՈՖՈՆ“ ԸՆԿ.
Գ. Ս. ԴԱՎԻԴՈՎ.
(Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպ. Ժողովարանի տակ)
ԳՐԱՄՄՈՖՈՆՆԵՐԻ ԵՒ ՊԼԱՍՏԻՆԿԱՆՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՀԵՍՏԸ ԵՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍՈՒՄ.

Անգլիական գրամմոֆոնների և պլաստինկանների բազմաթիւ նորութիւններ Լոնդոնի ամենավերջին մոդէլներով։

Պետական ծառայութեան մէջ եղողները կարող են մաս-մաս վճարել։

2—1

ԲԺԻՇԿ
ՓԱՆՕ ՄԱՆԴԷՆԵԱՆ
Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ։
Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.
0—45

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւնների՝ առանձնապէս կրծքի, ԹՈՒԱԽՏ և ՍՐՏԻ հիւանդութիւններ։ Սրսկում ներ նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ
Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւ. ժամը 9—11 և երեկ. 5—6 ժամը։
Католическая ул. д. № 10.
Телефонъ 792. 100—38

Типографія «Культура», Баронская, 14.

Խմբ.-հրատարակիչ՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ ԵՒ ԵՐԵՒԱՆՑԻՔ

—Մենք ցանկանում ենք տօնել մեր գործունէութեան քառասնամեակը.

—Ձեզք վեր առէք, ի սէր Աստծու ինձանից, ուզում էք ինձ մի լաւ հայհոյէք, ու պատճառը 40 ամեայ գործունէութիւնն էք բերում. լաւ եմ ճանաչում հայերիդ. մի ճաշ էք տալի, հարիւր անգամ օխտը պորտը հայհոյում էք. չեմ ուզում.

ՀՈԳԱԾՈՒՆԵՐ

Մեր գիւղացու համար, ասում են, թէ բանկեր են հարկաւոր, նրան՝ վաշխառուներից զերծ պահելու համար. այժմս մինչ կասէք. արդիօք սրանք յարմար բանկեր չեն, ինչ անենք թէ բանկաներ են.

—Կատարեալ բանկեր են.